



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

31 հոկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Ա. Թունյանի

Ուսումնասիրելով Աշոտ Քոչարյանի և այլոց անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Աշոտ Քոչարյանը, Ռաֆաել Առաքելյանը, Ռուբեն Աթոյանը, Արա Կիլիկյանը, Ամալիա Օհանյանը, Կարինե Բաբայանը, Անժելա Գրիգորյանը, Լյուդմիլա Առաքելյանը, Գագիկ Գրիգորյանը, Ալբերտ Մովսիսյանը, Սվետլանա Բրուտյանը, Զոյա Մալխասյանը, Ալբերտ Սաֆարյանը, Սուրեն Հովհաննիսյանը, Մամվել Ադամյանը, Ծովինար Գալստյանը, Հաղթանակ Շահումյանը, Գևորգ Գալստյանը, Արմեն Զաքարյանը, Սվետլանա Զաքարյանը, Արման Մաթևոսյանը դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Որոշել ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի (հետայսու՝ նաև ՎԴՕ) 193-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 54-րդ հոդվածի 1-ին մասով, 73-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հատուկ վարույթների բաժնի 26-րդ գլխով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության

օտարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերի անվավերության պահանջի դատական ընթացակարգի բացակայությունը և «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված դրույթների ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 10-րդ, 28-րդ, 29-րդ, 60-րդ, 61(1)-րդ, 63(1)-րդ, 75, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

Դիմողները նշում են, որ բացառիկ՝ գերակա հանրային շահը դադարում է գոյություն ունենալուց այն յոթ տարվա ընթացքում չիրացնելու փաստի ուժով, և, հետևաբար, այդ պահից է առաջանում դատարան դիմելու շահագրգիռ անձի իրավունքը:

Դիմողները գտնում են, որ ՀՀ կառավարության 20.11.2008թ. թիվ 1405-Ն որոշմամբ իրենց սեփականության (տնօրինման) տիրապետման տակ գտնվող տարածքների մասով բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության հարցը վիճարկելու իրավունք են ձեռք բերել սկսած այն պահից, երբ լրացել է ՀՀ կառավարության 25.01.2007թ. թիվ 108-Ն որոշմամբ նրանց գույքի նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու պահից յոթ տարին և չի սկսվել օտարման նպատակի իրագործումը, սակայն վիճարկվող իրավակարգավորումները կամ դրանց բացակայությունը չեն ապահովում նման իրավունքի իրականացումը, որով և հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Դիմողների կարծիքով՝ վիճարկվող իրավադրույթները և իրավակարգավորումների բացերը հակասում են ՀՀ Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածներին, քանի որ առաջացնում են խտրականություն դիմողների նկատմամբ՝ վերջիններիս կողմից վիճարկված ՀՀ կառավարության որոշումներով օտարվող օբյեկտների ձեռք բերող ճանաչված իրավաբանական անձանց համեմատ: ՀՀ կառավարության որոշումների արդյունքում դիմողների սեփականությունը ձեռք բերելու իրավունք ստացած կազմակերպությունը հայտնվում է իրավական առավել բարենպաստ դրության մեջ, քան դիմողները, այն պարզ պատճառով, որ հիշյալ կազմակերպության (կազմակերպությունների) ձեռքբերողի իրավունքները ժամանակային առումով երկարաձգվում են, իսկ դիմողների շահերի իրավական արդյունավետ պաշտպանության համար նախատեսված ժամկետները՝ ոչ:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի, այդ թվում՝ դատական

ակտերի, նախնական ուսումնասիրության արդյունքներից, գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մասնակի ընդունման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ.

դիմողների կողմից վիճարկվող իրավադրույթները նրանց նկատմամբ չեն կիրառվել:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին և դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում՝ օրենքի դրույթի կիրառման պայմանը:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ «օրենքի դրույթի կիրառում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը Սահմանադրական դատարանը բացահայտել է իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՄԴՈ-747 որոշման մեջ, մասնավորապես, արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «... ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...և չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է

իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՄԴԱՌ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»,

2) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ.

Խնդրո առարկա անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ հոդվածներով նախատեսված են իրավասու սուբյեկտների կողմից Սահմանադրական դատարան հասցեագրված դիմումներին ներկայացվող ընդհանուր պահանջները, դիմումին կցվող նյութերի շրջանակը, իսկ անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման է նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ դիմումը պետք է պարունակի նաև Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանը 24.11.2009թ. ՄԴՌ-839 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի հիշյալ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող դրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Խնդրո առարկա դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող իրավադրույթի մասով առկա չեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդ-

վածի 7-րդ մասի պահանջներին համահունչ իրավաբանորեն ձևակերպված հիմնավորումներ, ինչպես նաև դիմողները չեն հիմնավորել իրենց սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող իրավադրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը,

3) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ՝ «Հատուկ վարույթներ» բաժնի 26-րդ գլխի առնչությամբ.

ինդրո առարկա անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ՝ «Հատուկ վարույթներ» բաժնի 26-րդ գլխի ենթադրյալ հակասահմանադրականությունը դիմողները փորձում են հիմնավորել ենթադրյալ օրենսդրական բացի լույսի ներքո: Օրենսդրական բացը՝ որպես իրավունքի բացի տարատեսակ, իրավական կարգավորման ոլորտում գտնվող փաստական հանգամանքների նկատմամբ կոնկրետ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի փետրվարի 5-ի ՄԴՈ-864 որոշման մեջ, անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունների հարաբերակցությանը, ամրագրել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: Ձարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ գտել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի

ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը:

Խնդրո առարկա գործի շրջանակներում օրենսդրական բացի վերաբերյալ դիմողների փաստարկները հանգում են նրան, որ՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն նյութական իրավունքը, որի հիման վրա շահագրգիռ անձինք կարող են պահանջել բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության համապատասխան որոշման անվավերություն, սակայն այդ իրավունքի կիրառումն ապահովող դատավարական ընթացակարգերը բացակայում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հատուկ վարույթների բաժնի 26-րդ՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը կարգավորող գլխից, որով կարգավորվում են նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու ընթացակարգերը դրանց ընդունման կապակցությամբ և անդրադարձ չի կատարվում դրանց ընդունումից հետո օրենքով նախատեսված համապատասխան պայմանների հետևանքով դրանց անվավերության հարցերի քննարկման ընթացակարգերին: ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում գտնում ենք, որ խնդրո առարկա գլխի առնչությամբ դիմողների բարձրացրած հարցը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, և նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է,

4) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի առնչությամբ.

դիմողները պահպանել են ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Քննության առարկա անհատական դիմումով ներկայացվել է պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Աշոտ Քոչարյանի և այլոց անհատական դիմումով գործի քննության ընդունումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի, 73-րդ հոդվածի 3-րդ մասի, 5-րդ՝ «Հատուկ վարույթներ» բաժնի 26-րդ գլխի և «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի մասերով մերժել:

2. «Աշոտ Քոչարյանի և այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

4. Բավարարել Աշոտ Քոչարյանի և այլոց անհատական դիմումով ներկայացված՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

Նախագահող՝

Անդամներ՝